ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 11-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հոյաշուք կամարների ներքո, հընթացս Ս. Պատարագի, Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ-ի բարձր կարգադրությամբ և հունահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի օծյալ ձեռամբ Մայրավանքի երեք սարկավագներ արժանացան Հայաստանյայց Եկեղեցու քահանայության աստիճանին:

Այս խորհրդակատարությանն ունկնդիր և մասնակից էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները, ձեռնադրվողների հարազատները, ինչպես նաև մեր Եկեղեցու բարեպաշտ և հավատավոր զավակունք: Այդ օրն առանձնահատուկ մի մթնոլորտ էր տիրում Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, և ներկաների սրտերը համակված էին խանդավառությամբ:

Ըստ Հայաստանյայց Առաքելահիմն Եկեղեցու կանոնների և «Մաշտոց» ծիսարանի, դեռևս նախօրեի երեկոյան ժամերգությունից առաջ տեղի ունեցավ ընծայացուների ընծայման արարողությունը:

«Նայեաց ի մեզ...» քաղցրալուր շարականի հնչյունների ներքո Վարդգես սրկ. Մայիլյանը, Վարդգես սրկ. Մանուկյանը և Արսեն սրկ. Ծաղոյանը, Մայր Տաճարի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Արտակ վրդ. Տիգրանյանի խարտավիլակությամբ, Իջման Սուրբ Մեղանի առջև ենթարկվեցին հրապարակային դավանաքննության: Կոչվելով հոգևոր առաքելության՝ Իջման Սուրբ Մեղանի առջև նրանք բարձրաձայն ընթերցեցին մեր Եկեղեցու եռամեծ վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած «Հաւատոյ դաւանանք»-ը: Հերքելով ու նզովելով բոլոր հերետիկոսներին և հերձվածողներին, խոստացան աշակերտել և հետևել մեր ուղղափառ հայրերի վարդապետությանը, ինչպես նաև, իբրև կարևորագույն նախապայման ոչ միայն նրանց համար, այլև առհասարակ յուրաքանչյուր հայ քրիստոնյայի, դավանել անբաժանելի Ս. Երրորդությանը:

Արարողությունն ավարտվեց «Հայր մեր»-ով և «Պահպանիչ»-ով:

Հաջորդ օրը, առավոտյան ժամը 11-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի զանգերի ղողանջներն ազդարարեցին Ս. Պատարագի սկիզբը: Պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը: Պատարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած...» աղոթքը, որից հետո սկսվեց ձեռնադրության կարգը:

Հընթացս ոգեշունչ շարականների, սաղմոսների և աղոթքների երգեցողության, ընծայացուները, հետևելով խարտավիլակ Հայր Սուրբին, ծնկաչոք առաջնորդվեցին Ավագ Ս. Մեղան: Առաջին հերթին խարտավիլակ Հայր Սուրբը, իբրև ընծայացուների հոգևոր ու մտավոր հասունության պատասխանատու, վկայեց ու հաստատեց նրանց նվիրյալ պատրաստակամությունը՝ ի ծառայություն Հայաստանյայց Եկեղե-

ցուն և հայ ժողովրդին: Այնուհետև խարտավիլակ Հայր Սուրբի «Ընկալցի զքեզ Տէր» խոսքերից հետո քահանայացուները «Զեռս ի վեր առեալ», ծնրադիր դարձան դեպի արևմուտք և ի տես ներկաների կնքեցին իրենց սրբազան ուխտը Աստծո հետ՝ հրաժարվելով աշխարհական կյանքից: Երդման արարողությունից հետո հնչեց «Աստուածային եւ երկնաւոր շնորհ...» հոգեթով շարականը: Ապա ընծայացուները կրկին շրջվեցին դեպի արևելք, և Սրբազան Հայրը «Մաշտոց»-ից ընթերցեց «Ես դնեմ ձեռս ի վերայ սորա» հատվածը և մեկ առ մեկ ձեռնադրեց նորընծաներին: Այդ ընթացքում նրանց շնորհվեցին քահանայական փիլոն, շուրջառ և սաղավարտ, որից հետո փակվեց Ավագ Սուրբ Սեղանի վարագույրը, և նրանք զգեստավորվեցին:

Այս ամենից հետո հոգեզմայլ շարականների երգեցողությամբ, դպրաց դասի թափորով և երկնային զորությունների օրհներգություններով հանդիսավորապես Ավագ Ս. Սեղան բերվեց քրիստոսադրոշմ Մյուռոնով լի Մյուռոնաթափ աղավնին: Հայոց կենարար Մյուռոնով Սրբազան Հայրն օրհնեց և օծեց ընծայյալների ճակատը, աչ և ձախ ձեռքերը, Վարդգես սարկավագ Մայիլյանին անվանելով Տ. Հովհաննես քահանա, Վարդգես սարկավագ Մանուկյանին՝ Տ. Հովակիմ քահանա, և Արսեն սարկավագ Շաղոյանին՝ Տ. Միքայել քահանա:

Ձեռնադրությունն ավարտվեց օծյալների «Խաղաղութիւն ամենեցուն» օրհնությամբ, ապա Պատարագը շարունակվեց մինչև «Ողջոյն»-ի պահը, որից հետո Մայր Աթոռի միաբանությունը, ըստ ավագության կարգի, բարձրացավ Ս. Սեղան և շնորհավորեց ձեռնադրված քահանաներին՝ համբուրելով նրանց նորաօծ աջը:

Սրբազան Հայրը Պատարագի ավարտին իր սրտի խոսքն ասաց նորընծաներին և հավատավոր ժողովրդին՝ մաղթելով նրանց անսպառ եռանդ և անմնացորդ նվիրում:

Նույն օրը տեղի ունեցավ նաև վեղարի տվչություն: Տ. Հովհաննես և Տ. Հովակիմ քահանաներին, որոնք իբրև կուսակրոն քահանաներ պատրաստականություն էին հայտնել նվիրվելու վանական կյանքին, շնորհվեցին վեղարներ:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական կազմը և ուսանողությունը շնորհավորում է երիտասարդ քահանաներին՝ ցանկանալով նրանց անխոնջ նվիրում և հովվական արդյունալի գործունեություն իրենց քրիստոսավանդ առաքելության մեջ՝ ի փառս Աստծու, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և նրա հավատավոր զավակաց:

ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՄԵՂՅԱՆ